



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

*«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ  
նախագահ պարոն Փ. Թաղևոսյանին*

**Հարգելի պարոն Թաղևոսյան**

Ի պատասխան Ձեր 01.02.2016թ. (առցանց համար 2612-4EDB-D198) գրության, հայտնում եմ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի համաձայն 2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 05.09.2013թ. N1364-Ն որոշմամբ սահմանված է առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 29.12.2015թ. «ՀՀ կառավարության 05.12.2013թ. N1364-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N1571-Ն որոշումը: Որոշմամբ հստակեցվել է, որ օրենքով սահմանված հաշվարկային փաստաթղթերի բացառապես էլեկտրոնային եղանակով դուրս գրման նորմը վերաբերում է որոշմամբ սահմանված կարգին համապատասխան դուրս գրման ենթակա Ձև1, Ձև2 և Ձև3-ով սահմանված հաշվարկային փաստաթղթերին: **Հետևաբար, գրությամբ նշված ապահովագրական պայմանագրերին (վկայագրերին) կից ներկայացվող վճարման հաշիվները կարող են կազմվել թղթային եղանակով:**

2. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և **փաստաթղթերով հիմնավորված** ծախսերի չափով: Նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ապրանքանյութական պաշարների,

աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռքբերման (և համապատասխան դեպքերում՝ այլ հարկատուների եկամուտներին վերաբերող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները և այդ փաստաթղթերի կազմման կարգը սահմանված են ՀՀ կառավարության 25.08.1998թ. N 525 որոշմամբ հաստատված «Նյութական ու ոչ նյութական ակտիվների, ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման» կարգով (այսուհետ՝ Կարգ):

Տվյալ դեպքում, գրությամբ բարձրացված խնդրո առարկա հանդիսացող հարցի կարգավորման հետ կապված, Ձեզ անհրաժեշտ է ղեկավարվել Կարգի 1-ին բաժնի (Ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջները) 1-ին և 2-րդ կետերով: Մասնավորապես, **եթե** ապահովագրական պայմանագիրն **արտացոլում է իր մեջ Կարգի 2-րդ կետով սահմանված վավերապայմանները** և դրանով **հիմնավորվում է ապահովագրական ծառայության փաստացի մատուցումը** (համապատասխանաբար՝ ծառայություն ստացողի կողմից դրա ընդունումը), ապա նշված պայմանագիրը հանդիսանում է գործարքը հավաստող փաստաթուղթ, հետևաբար՝ հիմք կհանդիսանա ծախսերի հաշվեգրման համար:

**Հարգանքով**



**Վ. Միրումյան**